

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ

Ա. Հ. Սիմոնյան

«14» փետրվարի 2018թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ
ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱՎԱՌԵԼԻՔԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Կենտրոնի պաշտոնական անվանումն է՝

Հայերեն՝ «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն»,

Ռուսերեն՝ «Инновационный центр микробных биотехнологий и биотоплива»,

Անգլերեն՝ «Microbial biotechnologies and biofuel innovation center»:

3. Կենտրոնի գտնվելու վայրը՝ ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 (թիվ 5 ուսումնական մասնաշենք):

4. Կենտրոնը գիտակրթական ստորաբաժանում է, որի նպատակը մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի ոլորտում կրթական ծրագրերի, գիտական հետազոտությունների և նորարարական մշակումների իրականացումն է:

5. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ և կենտրոնի կանոնադրությամբ, ԵՊՀ կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:

6. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

7. Կենտրոնի խնդիրներն են.

7.1. նպաստել կիրառական մանրէաբանության, կենսավառելիքի և կենսաբանության ու հարակից միջմասնագիտական գիտությունների նորարարարական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում կրթական և գիտահետազոտական ներուժի զարգացմանը և կրթության որակի բարձրացմանը,

7.2. կրթական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, արտադրական ձեռնարկությունների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ համատեղ մշակել և իրականացնել նորարարական կրթական, հետազոտական ծրագրեր և “Start-up” նախագծեր,

7.3. կիրառական մանրէաբանության և կենսաբանության ու հարակից միջմասնագիտական գիտությունների, ինչպես նաև կենսավառելիքի բնագավառներում իրականացնել հիմնարար ու կիրառական ուղղվածության հետազոտություններ և սահմանված կարգով առևտրայինացնել կենտրոնի կողմից մշակված նորարարական տեխնոլոգիաները,

7.4. պատրաստել մրցունակ մասնագետներ՝ «Կիրառական մանրէաբանություն և նորարարական տեխնոլոգիաներ» և այլ մասնագիտությունների մագիստրոսական կրթական ծրագրերով, իրականացնել մասնագետների վերապատրաստումներ,

7.5. իրականացնել կենտրոնի կանոնադրական նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառույթներ:

8. Կենտրոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունել որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և ԵՊՀ ներքին իրավական ակտերին:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Կենտրոնի կառավարումն իրականացնում է կենտրոնի տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ-ի ռեկտորը:

10. Կենտրոնի կազմում գործում են ուսումնագիտական լաբորատորիա և գիտակրթական այլ ստորաբաժանումներ: Կենտրոնի տնօրենն ըստ սահմանված չափանիշների կազմում է կենտրոնի հաստիքացուցակի նախագիծը և այն ներկայացնում ԵՊՀ ռեկտորին:

11. Կենտրոնի տնօրենը՝

11.1. կազմակերպում և վերահսկում է կենտրոնի կրթական և գիտահետազոտական գործունեությունը, ապահովում է կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը և լուծում դրանից բխող հիմնախնդիրները,

11.2. համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ է տալիս կենտրոնի աշխատողներին,

11.3. սահմանված կարգով տնօրինում է կենտրոնի ֆինանսական միջոցները,

11.4. ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին,

11.5. ստորագրում է կենտրոնի անունից պատրաստվող փաստաթղթերը,

11.6. ներկայացնում է կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

11.7. պատասխանատվություն է կրում կենտրոնի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ իրականացման համար,

11.8. լուծում է կենտրոնի կանոնադրությունից բխող և կենտրոնի գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

12. Կենտրոնի տնօրենի բացակայության դեպքում, նրան իր առաջարկությամբ և ԵՊՀ ռեկտորի հրամանով փոխարինում է Կենտրոնի աշխատողներից որևէ մեկը:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13. Կենտրոնի գույքի և ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

13.1. կենտրոնին ԵՊՀ-ի կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը և դրամական միջոցները,

13.2. ՀՀ պետական բյուջեից պետական պատվերի շրջանակում կամ այլ եղանակով հատկացված միջոցները,

13.3. ՀՀ և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,

13.4. կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարվող միջոցները,

13.5. կենտրոնին թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

V. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

15. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ-ի գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

16. Կենտրոնի կանոնադրության հավելվածում ներկայացված են կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումները:

Հավելված

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿԵՆՍԱՎԱՌԵԼԻՔԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

- Ուսումնագիտական լաբորատորիա: